Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
205

1999

43917-Ա. Հ.

ԱՒԵՏԻՔ

„Եւ նորա անունովը ապաշխարութիւն ու մեղաց թողութիւն քարոզուի ամեն ազգերի մէջ՝ Երուսաղէմից սկսելով։“
Ղուկ. 24, 47։

4724

ԼԵՕՐ
ԳՐԱՎԱՃԱՌ

28934-62

ՏՓԽԻՍ
Յ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ.
1881

205-60 Գ
213 - 211

ԱՒԵՏԻՔ

„Եւ Նորա անունովը ապաշխարութիւն ու մեղաց թողութիւն քարոզուի ամեն ազգերի մէջ Երուսաղէմից սկսելով:"
Ղուկ. 24, 47.

ԳՐԱԴԱՐԱՆ

Սորանք էին Տէր Յիսուսի Քրիստոսի խօսքերը: Բայց նորանց վերայ խօսելուց առաջ պէտք է բացատրենք, թէ ինչ է Երուսաղէմը: Սա այն ազգի գլխաւոր քաղաքն էր, որին ընտրել էր Աստուած, և որին ջոկել էր Նորա բարի նախախնամութիւնը միւսներից: Այս քաղաքը մեծամեծ առաւելութիւններ ունէր. նա Աստուծոյ երկրպագութեան համար ընտրուած տեղն էր: Աստուծոյ շնորհքը և ներկայութիւնը նորանում աւելի շատ էր յայտնուած քան թէ մի ուրիշ տեղ: Բայց այն ժամանակ, որ այս խօսքերը ասուեցան, Երուսաղէմ ընկած էր և Աստուածանից հեռանում էր: Նա դառել էր մեղքի բնակարան. և ամեն տեսակ կեղծաւորութեան կեդրոն: Նորա առաջնորդների և ծերերի մէջ երևան էին եկել չարութիւն ու բամբասանք ամեն ճշմարիտ սրբութեան դէմ: Երուսաղէմը դառել էր սուրբերի սպանման տեղ. նորանում հալածեցին և սպանեցին Յիսուս Քրիստոսին և նորա հետևողներին: Մինչև այն աստիճան կարծրութեան հասաւ Երուսաղէմը, որ չվախեցաւ իր գլխին կանչել Աստու-

Ծոյ Որդու սպանումը ասելով, «դորա արիւնը մեզ վերայ և մեր որդոց վերայ.» (Մատթ. 27, 25։) Այսպէս էր Երուսաղէմը և այսպէս էին նորա նորա ժողովրդի մեղքերը։ Արդեօք կարելի է բոլոր աշխարհքում դորա նման մի ուրիշ բան ցոյց տալ։ Ոչ. ոչ մի ազգ չէ կարող հաւասարուիլ Երուսաղէմի հետ մեղքերի նկատմամբ, մանաւանդ երբ մենք յիշենք թէ նա մեղանչեց լուսոյ և իր գիտացածի դէմ, և արհամարհեց Աստուծոյ երկայնամտութիւնը և շնորհքը։ Այս մասին Երուսաղէմի չարութիւնը անսահման է։

Այս տեսակ էր Երուսաղէմը որին պիտի քարոզուէր ապաշխարութիւն և մեղաց թողութիւն Քրիստոսի անունով, և ամենից առաջ նորան քարոզուէր։ «Քարոզեցէք ամէն ազգերին, բայց սկսեցէք Երուսաղէմից։» Ինչու համար պէտք էր որ առաքեալները Երուսաղէմից սկսէին։ Հարկաւ՝ ոչ թէ նորա համար որ նորա բնակիչները առաւել իրաւունք ունեցած լինէին քան թէ միւս ազգերը, կամ թէ աւելի արժանի լինէին։ Ընդ հակառակը՝ Երուսաղէմը կորցրել էր ամէն արժանաւորութիւնները։ Բայց այս շնորհաց և կարեկցութեան խօսքերը արտայայտում են Աստուծոյ ողորմութեան առատութիւնը, և նորանից հանում ենք մենք այն եզրակացութիւնը, որ Յիսուս Քրիստոսին հաճելի էր իր ողորմութիւնը քարոզել տալ մեղաւորներից ամենամեծին։

Պէտք էր կարծէինք թէ, որովհետև Երուսաղէմի մեղաւորները երկրիս վերայ եղող մեղաւորներից ամենամեծերն էին, և որովհետև նորանք ոչ թէ միայն Քրիստոսին իրան էին մերժել, այլ նաև նորա վարդապետութիւնն ու հրաշքները և մինչև անգամ իրանց ձեռքերը

ներկել էին նորա արիւնովը, ուրեմն նա ասած կը լինէր. «Գնացէք քարոզեցէք փրկութեան աւետիքը բոլոր աշխարհքում՝ բացի Երուսաղէմից»։ Բայց որքան դթութիւն, և անսահման դթութիւն կայ Յիսուս Քրիստոսում։ Ի՞նչպիսի անուն դանենք այս ողորմած հրամանի համար, որ սիրոյ և մեղաց թողութեան լուրը պիտի նախ և առաջ քարոզուէր մեղաւորներից ամենամեծին։

Եւ այստեղ առաջին անգամը չէ որ յայտնուեցաւ աշխարհքին Յիսուս Քրիստոսի սրտում բնակուող շնորհքը. նա իր երկրաւոր կեանքի մէջ էլ փափագում էր, որ մեծամեծ մեղաւորները գային նորա մօտ մեղաց թողութեան համար, նոյն իսկ մաքսաւորներին և վատաբարոյ կանանց համար բաց էր Աստուծոյ թագաւորութիւնը։ Նոյնպէս էլ իր յարութիւնից յետոյ նա ուզում է, որ ամենամեծ մեղաւորները առաջ լսեն նորա դթութեան ձայնը։ Նորա սրտի համար մեծ արժէք ունի ամենանպիտանների փրկութիւնը, վասնորոյ և ասում է նա. «Բարի լուրը տարէք ամէն ազգերին, բայց նայեցէք որ սկսէք Երուսաղէմից»։ Եւ նորա աշակերտները չմոռացան այդ հրամանը։ Նորանք եկան Երուսաղէմ աւետարանը ամենամեծ մեղաւորներին քարոզելով, այսինքն նորանց, որոնք Յիսուսի սպանողներն էին, և որոնց նորանք ասում էին «դուք վեր առիք և անօրէնների ձեռքովը սպանեցիք փառաց Տէրին»։ Եւ ի՞նչ եղաւ սորա հետևանքը։ Երբոր Պետրոսը և միւս առաքեալները այս թշուառներին համոզել էին, թէ նորանք սպանել էին կենաց Իշխանին, նորանց սրտերը կակուղացան և իրանց յանձանքը ճանաչելով ասացին. «Ի՞նչ անենք մենք, մարդիկ եղբարք»։ Եւ Պետրոսը նորանց պատասխանեց, թէ նորանք ամենքը

առանց բացառութեան, եթէ ապաշխարեն և մկրտուին Յիսուսի Քրիստոսի անունովը մեղքերի թողութեան համար, կ՚ստանան սուրբ Հոգու պարգևը: Պետրոսն այնքան հեռու էր բացառութիւն անելուց, որ նա դարձաւ դէպի Նորանցից ամէն մէկը, որ իբր թէ Տէրիցը պատուէր էր ստացել ամէն մէկին համոզելու որ փրկութեան խօսքն ընդունէ: Ուրեմն նա ինչո՞ւ համար էր այնչափ պնդում այդ բանը: Նա ունէր իր կարևոր պատճառները: Նորա գործը հիմա Տէրի սպանողների հետ էր, այն մարդկանց հետ, որոնք մասնակցել էին այս չարագործութեան մէջ. և սորա համար Նորան անհրաժեշտ էր կանչել ամէն մէկին առանձին. որ ցոյց տար, թէ ամէն մէկի յանցանքը կարող էր ներուիլ:

Գուցէ Նորանցից մէկն ասում էր, «բայց ես Նորանցից մէկն էի որ դաւաճանեցին Նորա կեանքի դէմ. միթէ ես կարող եմ Նորանով փրկուիլ:» «Ձեզանից ամէն մէկը», պատասխանում է Պետրոսը: «Բայց ես Նորանցից էի, ասում է մի ուրիշը, որոնք սուտ վկայեցին Նորա դէմ. ինձ համար միթէ ողորմութիւն կլինի:» «Ձեզանից ամէն մէկի համար» էր Պետրոսի պատասխանը: «Ես Նորանց թշնամի էի, որոնք աղաղակում էին խաչ հանիր դորան, խաչ հանիր դորան.» ասում է մի երրորդը: «Ես խնդրում էի որ Բարաբբային կենդանի թողն և ոչ թէ Նորան. ի՞նձ ինչ կը լինի:» «Ինձ հրամայուած է մեղաց թողութիւն քարոզել ձեզանից ամէն մէկին», ասում է Պետրոս: «Բայց ես թքեցի Նորա երեսին», ասում է մի ուրիշը, «երբոր Նա կանգնած էր իր ամբաստանողների առաջին. ես Նորանցից էի որոնք ծիծաղում էին Նորա վերայ, երբոր Նա սրիւնաթաթախ թուլացած կախուել էր խաչի վերայ. միթէ

Նորա արքայութիւնումը ինձ համար էլ տեղ կը լինի»: «Ձեզանից ամէն մէկի համար», պատասխան է տալիս Պետրոսը: «Ես տուի Նորան քացախը զմուռսի հետ խառն որ խմէր. արդեօք ես մի այնպիսի դառն բաժակ չպիտի սպասեմ ինձ համար իբրև իմ մեղքի պատիժ»: «Ապաշխարիր, ասում է Պետրոսը, քո այդ մեղքիցը և մեղաց թողութիւն կ՚ստանաս, որ Տէրը ունի ձեզանից ամէն մէկի համար»:

Մեր օրհնեալ Տէրը չուզեց որ Նորանցից մէկն էլ է Նորա դթութիւնը չ՚ստանար. Նա ուզեց որ Նորանք լինէին Աստուծոյ ողորմութեան յիշատակները: Բայց սա դեռ բոլորը չէ: Քրիստոսը չուզեց իբրև ուրացութիւն ընդունել Նորանց առաջի մերժումը, որով մերժեցին այդ շնորհքը. նա չուզեց Նորանց երկրորդ մերժումն էլ իբրև արհամարհանք ընդունել. Նա ուզեց որ կրկին և կրկին անգամ փրկութիւն քարոզուէր Երուսաղէմի մեղաւորներին: Զարմանալի չէ՞ այդ դթութիւնը: Քրիստոս չէ ուզում որ իրան մերժեն: Նա ուզում է աշխարհին ցոյց տալ որ նա չէ վարվում մարդկանց որդիների պէս այլ ինքն իրան պէս: «Ես Աստուած եմ, ես չեմ մարդ» (Յովս. 11, 9): Մարդիկ ձգտում ունին վրէժ առնելու, հակամիտուած են իրանք իրենց պաշտպանելու բարկութեամբ և դայրոյթով. բայց Աստուած լեքն է ողորմութեամբ: Նա բարի է և սիրում է ողորմել. և դորա համար էլ գործք Առաքելոցի 3-դ, 4-դ և 5-դ գլուխներումը Պետրոսը յաճախակի համոզում է Հրէաներին, որ Յիսուսին ապաւինեն, որպէս զի ներուին Նորանց մեղքերը: Նա կրկին և կրկին անգամ գցում է ուռկանը երուսաղէմցի մեղաւորներին որսալու համար: Ո՜հ, ինչ մեծ է. Քրիստոսի գութը

դէպի նորանց։ Ահա հէնց այս գթութիւնն էլ ծածկում է մեղանից սատանան, որովհետև նա գիտէ, թէ որքան սիրա գրաւող է Քրիստոսի գթութիւնը։ Նա գիտէ, որ նորա մէջ մի քարշող զօրութիւն կայ, որովհետև Քրիստոսի գթութիւնը ամէն մտածողութիւնից առաւել յարմար է մեր սրտերը դէպի Աստուած քաշելու։

Չեմ կարող որ մէկ խօսք էլ չաւելացնեմ։ Թէ ի՜նչպէս զարմանալի է Քրիստոսի Յիսուսի ողորմութիւնը, յայտնվում է նորա այդ փափաքի մէջ, թէ նորա առաջի եկեղեցին Երուսաղէմում լինի։ Սա նշանակում էր, որ ամենամեծ մեղաւորներից Նա շինեց Աստուծոյ առատ շնորհաց ամենափառաւոր յիշատակներ։ Իր երկրաւոր կենաց ժամանակին էլ նա անց էր կենում ամենալաւերից և գնում էր ամենավատերի մօտը։ Այն մարդիկը, որ մօտ են մահուան, բժշկի կարօտութիւնը աւելի են զգում քան թէ նորանք, որոնց միայն երբեմն երբեմն է նեղացնում հիւանդութիւնը։ Ոչ թէ առողջներն են կարօտ բժշկի, այլ հիւանդները։ Կարծես թէ ողորմութիւնը թողում է իր բնական ընթացքը, երբոր նա գիմում է մի այնպիսի մարդու, որ արդար է իր աչքի առաջին. բայց ողորմութիւնը հոսում է յորդառատ, երբոր հասնում է մեղաւորներից մեծագոյնին։ Աստուծոյ գթութիւնը չի չափուիլ մարդկային արժանաւորութիւնով, չի ստացուիլ մարդուս արժանի աշխատութիւններովը, նա նոյնպէս չէ կարող կատարելապէս երևալ երբոր փրկում է շատ բարի յատկութիւններ ունեցող մարդկանցը։ Բայց երբոր գթութիւնը փշրում է ամենամեծ մեղաւորի սիրտը, այն ժամանակ նա պատիւ է բերում Քրիստոսի անունին։ Քրիստոս «բժիշկ» ասելով իրան է հասկանում։ դուք գիտէք,

որ բժիշկը անուն և համբաւ ստանալու համար պէտք է ընդունէ և բժշկէ այնպիսի հիւանդներին, որոնցից միւսներն ամենքը հրաժարուել են՝ նորան անբուժելի կամ արդէն մեռած համարելով։ Բժիշկները փառք չեն վաստակում փուշ հանելով կամ ճանկռուած տեղի վերայ սպեղանիք դնելով։ Դա ամէն մարդ կարող է անել։ Նորանք պէտք է յուսահատական հիւանդները բժշկեն, նորանք պէտք է առողջացնեն այնպիսիներին, որոնք գրեթէ արդէն մեռած էին։ Դորա համար Յիսուս Քրիստոսը պատուիրեց, որ Նորա գթութիւնը առաջ ամենամեծ մեղաւորներին քարոզուի։ Եւ որպէս զի նորանց քաջալերէ իրան մօտ գալու, Նա իր Աւետարանի մէջ մրցընել է շատ առողջացածների անունները, որոնց նա իր փրկարար շնորհաց յիշատակներ և յաւիտենական կենաց ժառանգներ էր արել։ Եւ յիրաւի շատ բան չէ ասուած այս օրհնեալ գրքում փոքր մեղաւորների փրկութեան մասին, որովհետև դա չէր համապատասխանիլ գրքի նպատակին, այսինքն Աստուծոյ անուան փառաւորելուն։ Ինչու համար էր Քրիստոս այնպէս հեշտութիւնով տանում այս աշխարհքի մեծամեծների մերժումը, և այնպիսի եռանդով որոնում է ամենակորածներին, եթէ չէ իր շնորհաց փառքի համար։ Այդ կերպով երբոր խնջոյքին հրաւիրուածները հրաժարուեցան գալ, և իրանց աշխարհային զուարճութիւններն ու զբաղմունքները գերադաս համարեցին, այն ժամանակ նա ուղարկում է իր ծառաներին, որ ստիպելով բերեն ամենից վատերին։ «Նուտով գնացէք, ասում է նա նորանց, և բերէք այստեղ խեղճերին, կաղերին և կոյրերին։ Գնացէք ճանապարհները և ցանգերը և ստիպեցէք գալու, որ իմ տունը լցուի»։ Նոյն-

պէս էլ երբոր Քրիստոս մերժուեցաւ և խաչի վերայ կախուած էր երկու աւազակների մէջ, որոնք իր հետ միասին խաչուած էին, Նա Նորանցից մէկին առաւ Իր հետ և տարաւ դրախտը: Դա միթէ մի տարօրինակ վարմունք չէր: Դա միթէ չափազանց շնորհաց յայտնութիւնը չէր: Այնտեղ Քրիստոսի շուրջը միայն աւազակները չէր որ կային: Միթէ ուրիշ էլ ոչ ով չկար Նորա մօտ: Միթէ Նա չէր կարող մի ամենաբարի մարդուն ընտրել, եթէ ուզենար: Այո, հարկաւ. բայց դա այնքան չէր յայտնի անել Նորա շնորհքը, և չէր կատարել Նորա նպատակը. սակայն հիմա ամեն մարդ, որ կարդում է աւազակի փրկուելու այդ պատմութիւնը, պէտք է ընդունէ, որ Աստուծոյ Որդին լեռն է գթութիւնով: Նորա այդ արածը չէ կարող մոռացուիլ այլ զարմացման առարկայ կը լինի մինչև աշխարհքիս վերջը:

Երբոր Աստուծոյ խօսքը քարոզվում էր կախարդութիւն և հմայութիւն անողների մէջ, ինչպէս որ մենք կարդում ենք Գործք Առաք. 19-դ գլխում, այն ժամանակ խլեց սատանայի ճիրաններից այդպիսի մի քանի զոհեր, որոնց համար նա վստահ էր թէ շատ աւելի իրաւունք ունի Նորանց վերայ: Քրիստոսի գթութիւնը առաւ Նորանից Նորա որսը. Նա ետ դարձրեց դժոխքի բուն իսկ սահմանիցը այն մարդկանցը, որոնք Նորա դաշնակիցներն էին: Այս բոլոր օրինակներովը Քրիստոս ուզում է խրախուսել միւսներին և Նորանց փափագը գրգռել որ որոնեն Նորա շնորհքը: Նա ուզում է Նորանց իրան մօտ քաշել որ Նորանք նոյն շնորհացը մասնակից դառնան: Ասուած է, թէ Աստուած փրկեց Նորանց Իր սիրոյ համար. սա նշանակում է Իր սէրը ցոյց տալ ամենամեծ մեղաւորնե-

ին, որպէս զի միւսները դան և Նորա մօտ գթութիւնը որոնեն: Նա փրկեց աւազակին, որպէս զի միւս աւազակներին յոյս տայ: Նա փրկեց Մագդալենացուն, որ ուրիշ Մագդալենացիներ յոյս առնեն: Նա փրկեց Սօղոսին՝ այն հայհոյողին, որ յոյս տայ ուրիշ Սօղոսներին, ինչպէս որ Պօղոս ինքն ասում է. Նորա համար ես ողորմութիւն դտայ, որ Յիսուս Քրիստոս առաջ ինձանում ցոյց տար բոլոր երկայնամտութիւնը իբրև օրինակ Նորանց համար, որոնք կհաւատան Նորան յաւիտենական կենաց համար»:

Նոյն պատճառով Տէրը փրկեց Սամարացի կնոջն էլ: Նա ամենավատ մեղաւորներից էր, բայց Տէրը Նորան երկնային լուր բերող արաւ. և երբոր նա քաղաքը դնաց և ասաց մարդկանց «եկէք», Նորանք ի՞նչպէս էին վազ տալիս որ Քրիստոսին տեսնեն: Այն խօսքը, թէ «նա ինձ ասեց բոլորն ինչ որ ես արել եմ», Նորանց համար շատ զօրաւոր համոզմունք էր, որովհետև Նորանք զորանից տեսան, որ Նա իմանալով այդ կնկայ բոլոր մեղաւորութիւնը, չէ արհամարհել Նորան: Եւ շատերը հաւատացին Նորան, որոնք կարելի է նոյնքան յանցաւոր էին որքան որ այն կնիկը: Մարդուս սիրտը թէ և ընկղմուած էլ լինի մեղքի մէջ, երբոր համոզվում է թէ Աստուած սիրում է ողորմելու, կակուղանում է և պատրաստ է լինում փախչել Քրիստոսի մօտ: Աստուծոյ սիրոյ յայտնուիլը մէկ հատիկ թունաւորն է մեղքի դէմ: Մէկ սիրա որ հաւատում է այդ սիրոյն, տաքանում է, թէպէտ և սառած էլ լինէր մեղքի մէջ: Տէրը չուզեցին էլ է սիրում որ դայ:

Ի՞նչ էք կարծում, թէ Յիսուսն ինչո՞ւ համար ասաց այն շնութեան մէջ բռնուած կնկան, թէ Նա Նորան չէ դատապարտում, եթէ չէ՞ Նորա համար որ ուրիշ Նորա

նմաններն էլ գան և գթութիւն ստանան Նորա ձեռքից, որովհետև Նորա այդ գործքից մենք բոլոր վստահութեամբ կարող ենք հետևցնել, որ Յիսուս Քրիստոսն ուզում է փրկել մինչև անգամ Նորա նմաններին:

Յիսուս Քրիստոսն ուզում է որ գթութիւնը նախ և առաջ ամենամեծ մեղաւորներին առաջարկուի, որովհետև այդ կերպով տկարանում է սատանայի թագաւորութիւնը: Ամենամեծ մեղաւորները սատանայի հաւատարիմ դաշնակիցներն են: Երբոր սատանան կորցնում է իր զօրաւորներին, այն ժամանակ Նորա թագաւորութիւնը տկար է: Քրիստոս եկել է Սատանայի գործերը քանդելու թէ իր ներող շնորհքովը թէ իր փրկարար արիւնովը: Օրինակ եմ բերում Մանասէին: Քանի որ նա մեղաւորների պարագլուխն էր՝ սարսափելի կռապաշտ էր, բոլոր երկիրը լցվում էր չարագործութիւններով, որովհետև «նա Յուդային տանում էր մեղքի մէջ». բայց երբոր նա դարձի եկաւ, բոլոր երկիրը կերպարանափոխ եղաւ, բարձրաւանդակները (կռոց բագինները) փչացան՝ նաև կուռքերը, և ընկաւ Բահաղի սեղանը. և ճշմարիտ հաւատքը վերահաստատուեցաւ իր բոլոր ոյժովն ու մաքրութիւնովը:

Բացի դորանից բոլոր յուսահատուածները քաջանում են տեսնելով որ ամենամեծ մեղաւորները ընդունվում են Քրիստոսի եկեղեցու ծոցը: Երբոր հաւատացեալները տեսան որ իրանց հալածող Պօղոսը միացել է եկեղեցու հետ, այն ժամանակ նորանք «փառաւորում էին Աստուծոյն նորա մասին»: Սատանան չէ սիրում բաժանուիլ նորանց հետ որոնք իրան այդպէս լաւ ծառայում էին: Ի՞նչ, ով իմ հին ծառայ, որ դու վաղուց էիր քեզ ինձ վերայ ծախել ամեն տեսակ չար գործի համար, մի՞թէ

հիմա ուզում ես որ ինձ թողես: Մի՞թէ չգիտես դու, ով թշուառ, որ քո մեղքերը խիստ շատ են քան թէ որ և է ողորմութիւն: Մի՞թէ կարծում ես թէ Քրիստոսն իր ձեռքերը կապտոտ քեզ վերայ: Բոլոր երկինքը պիտի ամոթից կարմրէր որ մի այդպիսի մեղաւոր թակում է Նորա դուռը՝ ողորմութիւն խնդրելով»: «Այսպէս էր համոզում ինձ սատանան», ասաց մէկ մեծ մեղաւոր: «Ապա դու ինչ պատասխան տուիր», հարցրեց Նորանից մէկը: «Ես համաձայնուեցայ Նորա հետ ինչ վատ բանի համար որ նա ասում էր ինձ վերայ»: «Բայց ի՞նչպէս, դու յուսահատուեցար»: «Ոչ. ես խոստովանուեցայ որ ես հէնց մի այնպիսի մեղաւոր եմ ինչպէս մաքսաւորը և աւազակը, ինչպէս այն Սամարացի կնիկը, ինչպէս անառակ որդին, մինչև անգամ Նորանց ամենից էլ վատ եմ, բայց թէ Աստուած այդու ամենայնիւ ոչ թէ ինձ չէ մերժում, այլ նոյն իսկ՝ ինչպէս յետոյ իմացել եմ՝ Նորա տանը ուրախութիւն և ցնծութիւն կայ որ ես հետ եմ դարձել»:

«Փառք քեզ, ով Աստուած, ասաց միւսը, հիմա կարող եմ յուսալ, որ ինձ համար էլ կայ գթութիւն»:

Ուրեմն երբոր սատանան յարձակվում է մեզ վերայ մեզանում վախ ու անվստահութիւն դէպի Աստուած յարուցանելով, այն ժամանակ մեզ էլ է կարողութիւն դրուած Նորան դիմադրել. հրեշտակներն իջնում են երկնքից որ մոիկ տան այդ պատերազմին և ուրախանում են տեսնելով որ մի չնչին արարած աղատուել է խաւարի թագաւորութիւնից և իշխանութիւնից: Երբոր մի այդպիսի մեղաւոր աղատուած է լինում թշնամու ձեռքից և մտնում է Քրիստոսի եկեղեցին, այն ժամանակ Նորա դարձը ասում է ամենին, «տեսէք թէ ինչպէս յայտնի է

ինձ վերայ Աստուծոյ շնորհաց լիութիւնը և առատութիւնը: Ես օրինակ եմ ձեր աչքի առաջին, որ ինձ վերայ նայելով ամենամեծ մեղաւորը չյուսահատուիս:

Միւս պատճառը, որ Յիսուս Քրիստոսը ուզում է որ Նորա գթութիւնը ամենից առաջ ուղղուի դէպի ամենամեծ մեղաւորները, այն է որ նորանք դարձի գալուց յետոյ յարմար են Նորան աւելի սիրելու: Այս բանում Սուրբ գիրքն էլ մեր միտքն էլ համաձայն են: «Ում որ շատ է ներուել, նա շատ է սիրում»: Դորա համար ասուած է Պօղոսի մասին, որ սպառնալիքներով ու սպանութիւններով շնչում էր Տէրի աշակերտների վերայ և նորանց հալածում էր մինչև անգամ ուրիշ քաղաքներում, թէ նա յետոյ ամենից շատ աշխատեց: «Բայց քեզ ի՞նչ էր սիրում, ով Պօղոս»: «Քրիստոսի սէրը» պատասխանում է նա: «Դժոխքը գիտէ որ ես մի մեծ մեղաւոր էի. սա երկինքն էլ գիտէ, աշխարհքն էլ. սակայն ես ողորմութիւն գտայ: Ո՜հ, դա ինչ ողորմութիւն է որ Աստուած այցելութիւն արաւ և փրկեց ինձ: Դորա համար ես միշտ կանչում եմ «թէ ես ի՞նչ հատուցանեմ Տիրոջը Նորա բոլոր բարերարութեանց համար»: Պօղոս, դու խօսում ես ինչպէս մի մարդ որ յաղթուած է Աստուծոյ սիրովը: Այդպիսի սէր է ուզում Քրիստոսը: Եթէ նա քսան փոքր մեղաւորների դարձրած լինէր, նա նորանց ամենի մէջ միասին այդչափ սէր չէր գտնիլ: Ում որ քիչ է ներվում, նա քիչ է սիրում: «Քրիստոս ոտքի համար ջուր էլ չէ տալիս երբոր փոքր մեղաւորներին է փրկում: Եթէ աշխարհքումս շատ կան առանց արտասուքի քրիստոնեաներ, որոնցից Քրիստոս նարդոսի իւղն շեշ չէ տեսել, դորա պատճառն էլ այն է, որ նորանք իրանց փոքր մեղաւորներ

են համարում, նորանք իրանց մեղքերի վերայ նայում են պաղ օրինաւորութեան մանրացուցիչ ապակիովը:

Քրիստոսն ուզում է փրկել ամենամեծ մեղաւորներին և նորա համար որ նորանց ընդունած շնորհքը նորանց մէջ փառաւորագոյն լուսով է փայլում: Զոր փայտը ամենից լաւ է այրում: Շնորհքը առիթ է առնում մարդուս անպիտանութիւնից որ առաւել ևս փայլէ նորանում: «Ուր որ մեղքը շատացել էր, այնտեղ գերազանցապէս յորդում է շնորհքը:» Քրիստոսի աշխարհք գալուց հէնց քիչ առաջ Երուսաղէմի մարդկանց մեծ մասը զարհուրելի անկման մէջ էր բարոյապէս. Նորանցից ոմանք իրանց կեղծաւորութեամբն էին պարծենում, ոմանք իրենց անառակութիւնովը. սատանան յարձակուել էր նորանց վերայ ամենասոսկալի կերպով և նորանցից շատերին յափշտակել էր: Կարծես թէ մի ազգ չը կար որ այդքան դիւահարներ ունեցած լինէր: Աստուած ի՞նչու համար էր դա թոյլ տուել: Պատճառներից մինը նա է որ Աստուծոյ գործքերը յայտնուէին նորանց վերայ և որ Աստուծոյ Որդին փառաւորուէր:

Աստուած ուզում է որ իր գթութիւնը ամենից առաջ ամենամեծ մեղաւորներին առաջարկուի և նորա համար էլ որ այդ կերպով նորանք, որ անարգում են այդ ողորմութիւնը և զրկվում նորանից, բնաւ չը կարողանան իրանց արդարացնել Աստուծոյ ատեանի առաջին: Աստուծոյ խօսքը երկայրի սուր է, նորա տուած վէրքերը երկու տեսակ են. եթէ նա քեզ համար օգտակար չէ, ուրեմն վնասակար է: Նա կենաց հոտ է նորան ընդունողների համար, և մահուան հոտ է նորան մերժողների համար: Բայց սա դեռ ամենը չէ. «Աստուծոյ ողորմութիւնը, որ

Հիմա առաջարկվում է ամենամեծ մեղաւորներին, նորանց
կը պապանձեցնէ դատաստանի օրը: «Բայց հիմա, ասում
է Քրիստոսը, չեն կարող իրանց անմեղ անել:» Քրիստոսն
ի՞նչ էր ասել նորանց: Այն թէ նորա ամենամեծ ուրա-
խութիւնը նա է որ ամենամեծ մեղաւորներին փրկէ: Նա
այդ ասել էր իր սովորեցնելովը. Նա այդ ցոյց էր տուել
իր կեանքովը, նոյնպէս մինչև իր վերջի շունչը: Հիմա որ
այսպէս է, ի՞նչ կասեն իրանց արդարացնելու համար
դատապարտուածները, ինչով կը պաշտպանուին յաւի-
տենական դատապարտութիւնից, որի վճիռը պէտք է
ասուի նորանց վերայ: Ես կրկնում եմ, նորանք այն ժա-
մանակ ինչպէս կը բացատրեն թէ ինչու համար հիմա
որ փրկութեան օրն է, նորանք չ՚եկան Քրիստոսի մօտ որ
փրկութիւն ստանային: Արդեօք հիմք կունենան ասելու
թէ «դու միայն փոքր մեղաւորներին էիր փրկում,» և
դորա համար նորանք չէին համարձակվում Նորա մօտ
գալ, որովհետև իրանք մեծ մեղաւորներ էին: Կամ թէ
Նորան կասեն. «դու ցաւակցութիւն չունէիր մեծ մեղա-
ւորների հետ, դորա համար ես էլ յուսահատուած մե-
ռայ:» Մի՞թէ Աստուծոյ գիրքը դորան հակառակը չէ
ասում ամեն քայլում իր բազմաթիւ խոստումներովը,
հրաւէրներովը և օրինակներովը: Երկնքումը հազարաւոր
փրկուածներ պատրաստ կը լինեն այդ պատճառանքին
հակառակելու, և կը խոստովանեն, որ իրանք ամենամեծ
մեղաւորներ էին: Ահա մի աւազակ կը գայ և կասէ, «ես
կարծում էի թէ իմ մեղքը մի այնպիսի մեղք է որ կա-
րող չէ քեզանից ներում գտնել:» Բայց երբոր նա կը-
տեսնէ խաչի վերայ եղած աւազակին, որ կանգնած կը
լինի Նորա կշտին և հագած փրկութեան լուսափայլ

հանդերձները, այն ժամանակ ի՞նչ կասէ: Ահա գալիս է
մի մարդ ամենից առաւել անբարոյական կեանքի տէր և
ջանք է անում ապացուցանելու, որ նորա մեղաց շա-
տութիւնը արգելում էր նորան որ ընդունէ խոստումը:
Բայց մի՞թէ նորա շրթունքները չէին կապուիլ, երբոր Ղովտը
և յանցանք գործած Կորնթացիները կը գտուին նորանց
առաջին: Այո, այն ժամանակ Տէրը ցոյց կտայ իր սուր-
բերից տասը հազարաւորների, որոնք ամենամեծ մեղաւոր-
ներ եղած լինելով կարող են վկայել թէ Նա կարող է և
ուզում է փրկել այնպիսիներին ինչպէս որ դու ես: Նո-
րանց մեղաւորութեան մեծութիւնը ամեն մէկի բերանը
կը խցկէ, որ կը հակառակէ իր դատապարտութեանը:

Այնտեղ կը լինի Ադամը, որ իր մեղքովը բոլոր մարդ-
կային ցեղին կորուստ է պատճառել, այնտեղ կը լինի
Աբրահամը, որ կռապաշտ էր եղած, և նենգաւորութիւն
արած Յակոբը, և Ահարոնը որ երկրպագելու համար շի-
նեց այն ոսկի հորթը: Այնտեղ կը լինի Ռախաբ պոռնիկը,
և Սողոմոնը որ Աստուածանից հեռացաւ, և Մանասէ
արիւնահեղը: Այնտեղ կը լինի Մագդաղենացի Մարիամը
և մաքսաւոր Մատթէոսը և ուրիշ շատերը, որոնց մասին
հիմա խօսելու ժամանակ չը կայ: Աւաղ, ով դու ամենա-
մեծ մեղաւոր, դու այն ժամանակ ի՞նչ պիտի ասես քո
կամակոր յամառութեան համար, որ հիմա Աստուծոյ
քեզ առաջարկուած մեծ ողորմութեան առատութիւնը
մերժում ես:

Այս փառաւորեալ սուրբերի մէջ շատերը համբա-
ւաւոր են իրանց գործած ամենաղտոտ մեղքերովը. բայց
հիմա նորանք փայլում են պայծառ հանդերձներով Աս-
տուծոյ և Գառի աթոռի առաջին՝ յաւիտենական յաւի-

տենից գովաբանելով Աստուծոյ Որդոյն, որ նորանց համար մեռաւ խաչի վերայ և կրեց նորանց տեղ Աստուծոյ բարկութեան յաստումը։ Նորանք ամենքը վկայ են Աստուծոյ համար և նորա շնորհաց համար որ նա ունէր դէպի անհաւատ աշխարհքը, որ չէ ընդունում Աստուածանից ողորմութիւնը և արհամարհում է Քրիստոսի արիւնը։

Բայց ի՞նչ բան կայ առաւել լեղի վերաւորող քանթէ դթութեան մերժումը խոստովանելը։ «Ճշմարիտ է, կասէ անդեղջ մեղաւորն ինքն իրան, ես սարսափելի մեղաւոր էի. բայց սա պիտի ինձ համար արդեւք չը դառնար Քրիստոսի մօտ գալու։ Հիմա ես շատ մարդիկ եմ տեսնում փառաց մէջ, որոնք ինձանից լաւ չէին, բայց փըրկուած են Քրիստոսին ապաւինելով, բայց ես դատապարտվում եմ անհաւատութեան պատճառով։ Ես թշուառ մարդ. ի՞նչու ես փառք չը տուի Քրիստոսի փրկարար արեանը և չը հաւատացի այն խօսքին որ ասում էր ինձ, թէ նա քաւում է ամէն մեղքերը։ Ինչո՞ւ համար վեր չ՚առի ես Աստուծոյ խօսքը, չը կարդացի ուշադրութիւնով, նայելով նորան որ օրհնութիւն էր խոստացել։ Ո՜հ, ի՞նչպէս պիտի կեղեքուին չը հաւատացողները Քրիստոսի աթոռի առաջին այդպիսի ալէկոծութիւններով, մանաւանդ նորանցից այն անձինք, որոնք շատ անգամ լսել են Աստուծոյ շնորհաց Աւետարանը։ Ո՜հ որքան սոսկալի է այն խօսքը, «թէ դիւրին կը լինի Սոդոմի ու Գոմորի համար դատաստանի օրումը քանթէ ձեզ»։

Ես շատ անգամ մտածել եմ դատաստանի օրուան վերայ ու նորա վերայ, թէ Աստուած ինչպէս է վարուելու մեղաւորների հետ, ու հաւատացած եմ, որ դատապարտուածները այնպիսի համոզում կունենան Աստուծոյ

իրանց վերայ արած դատաստանի վերայ, որ պիտի զգան թէ Աստուծոյ համար անկարելի էր ուրիշ կերպ վարուիլ այլ պէտք է նորանց հանէր երկնքից և մատնէր դժոխքի կրակին։ Ի՞նչպէս անտանելի պիտի լինի նորանց համար այն միտքը որ նորանք զրկուել են դթութիւնից և շնորհքից և դատապարտուած են յաւիտենական անէծքի բուն իրանց հպարտութեան, համառութեան և անհաւատութեան պատճառովը։ Նորանք պիտի կրճտեցնեն ատամները խորհելով թէ իրանց դթութիւն առաջարկուեցաւ, բայց իրանք մերժեցին այն և ընտրեցին յաւիտենական կորստեան ճանապարհը. «և սորանք կը գնան յաւիտենական տանջանքը»։

Ես կը վերջացնեմ մի քանի յորդորական խօսքերով։ Մարդուս համար շատ բնական է Աստուծոյ վերայ սխալ գաղափար ունենալ, այսինքն նորա դթութիւնը սահմանափակ և նեղ հասկանալ։ Շատերը կարծում են թէ մենք պէտք է Քրիստոսի մօտ չգանք մինչև որ մեր աղտեղութիւնից մի մասը լուացած և մաքրած և մեզ Նորա աչքին մի քիչ լաւացրած չը լինենք։ Այդպիսի մարդիկ բնաւ չեն հասկացել այն խօսքի միտքը թէ «սկսելով Երուսաղէմից»։ Այդպիսի մարդիկ չեն հաւատում թէ Աստուած ինչ է ասել Յիսուսի Քրիստոսի արեան համար, թէ նա մի բաց աղբիւր է ամէն մեղք և աղտեղութիւն մաքրելու համար։ «Յիսուս Քրիստոսի արիւնը մաքրում է մեզ ամէն մեղքից»։ (1 Յօհ. 1. 7)։ Սա Աստուծոյ խօսք է։ Եւ Նորա շնորհիւ էլ ձեզ (գրքարանի առաք. 13 գլուխ) մեղաց թողութիւն է քարոզվում. և դա ամենայնի «ամէն հաւատացող արդարանում է նորանով»։ (Համար 38 և 39։) Ոչ ով բացառութիւն չէ կազմում այս խօսքերից։

28034-62
1639
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն Քրիստոսին ապաւինողները թողութիւն են գտել. ամեն չը հաւատացողները պիտի մեռնեն իրանց մեղաց մէջ։

Ուրիշները կարծում են թէ Քրիստոս նորանց կը մերժէ նորանց մեղքերի պատճառով։ Բայց այս մեր բնաբանի խօսքերը փչացնում են այդ առարկութիւնը։ Ամենից առաջ ամենավատերն են ստանում հրաւէրը, և մենք գործ. առաք. 2դ գլխում կարդում ենք, թէ ամենավատ մեղաւորները ամենից առաջ վազեցին Քրիստոսի մօտ և ամենից առաջ էլ փրկուեցան։ Ոմանք ասում են. «Տէր, ես այնպէս չեմ ինչպէս ուրիշ մարդիկը». սակայն եթէ այդպիսիները փրկուին էլ, միայն վերջիններ կը դառնան։ Ուրեմն եթէ ուզում ես փրկուիլ շուտով, անունդ ամենավատերի հետ գրիր։ Քեզ մի զարդարիր։ Խոստովանիր Աստուծոյ առաջին ամեն ինչ որ գիտես, թէ գործել ես. եկ ինչպէս մի անձ որ զգում և իմանում ես, որ չես կարող չը կորչել եթէ Քրիստոս չփրկէ քեզ։

Դեռ մէկ խօսք էլ ունիմ քեզ քաջալերելու եթէ դու քեզ ամենամեծ մեղաւոր ես համարում. դու ճիշտ քո անունովն ես կանչուած որ դթութիւն որոնես և գտնես։ Ով Երուսաղէմի բնակիչ, լսիր՝ քեզ են կանչում։ Երբոր մարդկանց կանչում են մարդկային դատաստանի առաջին, նորանք ասում են, «ահա՝ այստեղ եմ», և ամբոխի միջովը ճղելով ու գնալով ասում են «թող տուէք, գնամ, ինձ ատեան են կանչում։ Ահա սա է քո վիճակը, ով Երուսաղէմցի մեղաւոր։ Տէրը կանչում է քեզ։ Ի՞նչ ես կանգնել։ Եկ,այս կանչելը քեզ իրաւունք է տալիս դալու, վեր կաց և անց կաց ճղելով ամբոխի միջովը։ Ասիր, «թող տուր, սատանայ, Քրիստոսը կանչում է ինձ։ Ճանապարհ

բաց արէք՝ գնամ, ով անհաւատութիւն և երկիւղ, իմ Փրկիչը կանչում է ինձ, որ ես Նորանից ողորմութիւն ստանամ։ Քրիստոսը կանչում է իր ողորմութեան աթոռից, «եկէք ինձ մօտ, ով ամեն աշխատածներ և բեռնաւորածներ»։ Ուրեմն՝ Քրիստոս որ քեզ ասում է «եկ», թող հրեշտակներն անգամ ետ քաշուին և մարդիկ ճանապարհ տան, որ դու կարողանաս Քրիստոսի մօտ գնալ դթութեան համար։

Եթէ Քրիստոսն ուզում է որ դթութիւնը առաջարկուի ամենամեծ մեղաւորներին, դու ուրեմն ինչո՞ւ համար չգաս։ Եկ խորհրդածենք միասին։ Դու քո սրտումը զօրութիւն կգտնաս արդեօք մի այդպիսի դթութեան հակառակելու։ Քեզ ի՞նչ է ետ պահում։ Մի՞թէ Աստուած քեզ վերայ էլ պէտք է գանգատ անէ ինչպէս Իսրայէլի վերայ, թէ «ես կանչեցի, բայց պատասխան տուող չը կար»։ Ինչո՞ւ ես խփում ականջներդ։ Երբոր քեզ կը կանչեն որ հաշիւ տաս այդպիսի մեծ փրկութեան մասին անհոգ լինելուդ համար, ի՞նչ ես պատասխանելու։ Եթէ քո մեղաց շատութիւնը չէ կարող քեզ արգելել, թող ուրեմն քո սրտի յամառութիւնն էլ չարգելէ քեզ, ով մեղաւոր։ «Բայց ես ամաչում եմ, ասում ես դու. բայց մի՞թէ դու իրաւ ամաչում ես փրկուելուցդ։ «Իմ առաջուայ ընկերները կը ծիծաղեն ինձ վերայ»։ Բայց մի՞թէ դու թոյլ կը տաս որ նորանց ծաղրն ու ծիծաղը քեզ զրկեն յաւիտենական կեանքից։ Երբոր Քրիստոս մտիկ արաւ Երուսաղէմին, լաց եղաւ նորա վեր։ Մի՞թէ դու, որ այս լսում ես, սիրտդ չէ յուզվում։

Ամեն ինչ որ քեզ ետ է պահում Քրիստոսից՝ մի ուրիշ բան չէ եթէ ցնորք, որոնք իսկոյն կը չքանան։

Մի՞թէ դու դորանց պատճառով վճռում ես երկինքը կորցնելու: Մի՞թէ դու զրկուած ես հասկացողութիւնից: Մի՞թէ դու չես կարողանում մէկ անգամ ծանրապէս մըտածել քո վերջին ժամուան վերայ և նորա վերայ թէ քո մեղքերը քեզ ուր պիտի տանեն: Մի՞թէ քեզանում խղճմտանք չը կայ, կամ կուրացել է մեղքով: Ողորմելի՜ մարդ. ինչքան թշուառ է քո վիճակը: Համոզուիր որ քանի դեռ ուշ չէ՝ լսես ողորմութեան ձայնը: Հնազանդիր կոչմանը: Քեզ կանչում են, որ գաս Քրիստոսի մօտ, և կանչում են միմիայն Աստուծոյ Որդոյ հրամանովը, եթէ դու ամենամեծ մեղաւորն էլ լինէիր. որովհետև նա մեզ հրամայել է նորա ողորմութիւնը առաջարկել բոլոր աշխարհքին՝ սկսելով Երուսաղէմից:

Дозволено цензурою. Тифлисъ. 18 Іюля 1880 г.

Типографія И. Мартиросіанца, на Орбел. улицѣ д. № 5.

ՀՀ Ազգային գրադարան
NL0108402